



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների
դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ուսումնասրության համընդհանուր ձևավորումը ուսուցման
գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Լատրա Գրքիկյան
Հոգեբան, ուսուցչի օգնական՝ Իրինա Մակարյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Ներածություն | 3 |
| ԳԼՈՒԽ 1 | |
| ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՁևԱՎՈՐՈՒՄ | |
| 1.1 Համընդհանուր ձևավորումը և կրթությունը | 5 |
| 1.2 Համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը | 5 |
| 1.3 Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը | 6 |
| 1.4 Ուսումնառության համընդհանուր ձևավորման շրջանակը | 7 |
| 1.5 Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները | 8 |
| ԳԼՈՒԽ 2 | |
| ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԾՆԹԱՅՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ | |
| 2.1 Գործընթացի իրատեսական պլանավորումը | 18 |
| 2.2 Ուսումնառության գործընթացի անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը | 19 |
| Եզրակացություն | 20 |
| Օգտագործված գրականություն | 21 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համընդհանուր ձևավորում հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը՝ նկարագրելու համար բոլորի՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի շինություններ կառուցելու գաղափարախոսությունը: Հայտնի են նրա հետևյալ խոսքերը՝ «Համընդհանուր ձևավորումը արտադրանքի և միջավայրերի նախագծում է բոլոր մարդկանց օգտագործման համար, հնարավորինս բացառելով հետագա հարմարեցման կամ փոփոխությունների անհրաժեշտությունը»:

Մեյսը անվասայլակով էր տեղաշարժվում և անվերջ խնդրում էր, որ շենքերում ապահովվի ֆիզիկական մատչելիությունը: Ի վերջո, նա առաջարկեց շենքերը նախագծելիս հաշվի առնել մատչելիության հանգամանքը՝ խնայելով ժամանակ, գումար և բարելավելով բոլորի կյանքը: Լայն իմաստով, ճարտարապետական համընդհանուր ձևավորման նպատակն է ապահովել անխտիր բոլոր շինությունների մատչելիությունը անխտիր բոլորի համար:

Թեմայի արդիականությունը: Թեման արդիական է քանզի համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել ճարտարապետությունից գատ այլ բնագավառներում: Օրինակ՝ համընդհանուր ձևավորման մոտեցումներից է յուրօրի օգտատերերին հայտնի փակ ենթագրերի օգտագործումը (CC): Այս տողերն ի սկզբանե նախագծվել են լսողության խանգարումներ ունեցող մարդկանց՝ տեղեկատվությանը ծանոթանալու հնարավորություն ընձեռելու համար, սակայն այժմ լայնորեն օգտագործվում են հեռուստացույցների էկրաններին: Այս ձևավորումը «համընդհանուր» է, քանի որ օժանդակում է լսողության խանգարումներ ունեցող մարդկանց, միաժամանակ դրանից օգտվում են բազմաթիվ այլ մարդիկ: Օրինակ՝ նրանք, ովքեր լիարժեք չեն տիրապետում տեղեկատվության լեզվին և միաժամանակ կարդում են տողատակերը, կամ անձինք, ովքեր ցանկանում են հեռուստացույց դիտել, երբ զուգընկերը քնած է, նաև նրանք, ովքեր աղմկոտ տեղում տեսանյութ են դիտում և ի գործու չեն լիարժեք լսելու տեղեկատվությունը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է վերհանել համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար:

Այդ օրինակներից են՝

- Ճամփեզրերի կտրվածքները, որոնք ստեղծվել են սայլակով տեղաշարժվողների համար, բայց անհրաժեշտ են անվասայլակներ օգտագործողներին, մանկասայլակով երեխայի հետ զբոսնող ծնողներին, հեծանվորդներին և այլոց:
- Առողիոգրքերը, որոնք ստեղծվել են տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար, բայց լայնորեն կիրառվում են նաև տեղեկությունը լսողությամբ ընկալել նախընտրող, կարդալու ժամանակ չունեցող անձանց կողմից:
- Ձայնային ազդանշանով վերելակները, որոնք տեսողության խանգարում ունեցող անձանց նախազգուշացնում են վերելակի ժամանելու մասին, բայց օգտակար են նաև հեռախոսի մեջ խորասուզվածների համար:

Խնդիրները: Հայաստանում շատ շենքեր պատմական նշանակություն ունեն, ուստի համընդհանուր ձևավորումը այստեղ լուրջ մարտահրավեր է: Շատ դեպքերում ֆիզիկական մատչելիությունը բարելավելու համար շենքերն արդիական տեխնոլոգիաներով ձևավորվում են: Ստացված արդյունքները միշտ չէ, որ գոհացուցիչ են: Մատչելիությանը միտված որոշ մոտեցումներ (օրինակ՝ թեքահարթակների ստեղծումը, բազրիքների տեղադրումը և այլն) երբեմն արդյունավետ են, կան նաև ոչ արդյունավետ լուծումներ: Հայաստանում ժամանակակից շենքերի նախագծման ժամանակ համընդհանուր ձևավորման սկզբունքներին հետևելը նոր ձևավորվող մոտեցում է:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵԱՎՈՐՈՒՄ

1.1 Համընդհանուր ձևավորումը և կրթությունը

2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀՁ): Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին: Դեյվիդ Ռոզը և Անն Մեյերը (2005) ՈՒՀՁ-ն նկարագրել են որպես տեղեկատվությունը աշակերտներին ներկայացնելու, նրանց սովորածը ստուգելու և դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների ամբողջություն: ՈՒՀՁ-ի հիմքում այն սկզբունքն է, որ նյութի բովանդակությունը ակադեմիական փորձառության ամենակարևոր մասն է, սակայն ուսուցիչները սովորողներին դասապրոցեսում ներգրավելու համար բազմազան միջոցներ կիրառելու վարպետություն պետք է ցուցաբերեն: Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա:¹

1.2 Համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը

Ներառման գործում ՈՒՀՁ-ի կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմազանության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերափմաստավորելու համար: Մանկական գրականության միջոցով մարդկանց տարբերությունների ներկայացման (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016) և

¹Արնաուդյան Ա., Գյուլբուղդյան Ա., Խաչատրյան Ս. և ուրիշ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Եր., 2004: Էջ 14-19:

ուսուցիչների վերապատրաստումների նկատմամբ նոր մոտեցումների մշակման արդյունքում խորանում են մարդկային բազմազանության մասին պատկերացումներն ու տարբերությունների ընդունումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մասնանշելու փոխարեն առանձնացվում ու երևան են բերվում նրա ռեսուրսները և ներուժը: Խորհրդային տարիներին ենթադրվում էր, որ բոլոր մարդիկ իրար նման են, կատարյալ, գեղեցիկ, առանց խնդիրների: Բոլոր նրանք, ովքեր չէին բավարարում այս չափանիշներին (ունեին տեսողական, լսողական, ֆիզիկական, մտավոր, նույնիսկ խոսքի և հաղորդակցման խնդիրներ), մեծանում էին հատուկ գիշերօթիկ հաստատություններում, իրենց ընտանիքներից ու հասարակությունից առանձնացված: Այսօր Հայաստանում գնալով ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը, և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները, նրանց մոտ նյութի նկատմամբ հետաքրքրությունն առաջանում է դասավանդման որոշակի մոտեցման կիրառման դեպքում:² ՌԻՀԶ-ը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող բազմազան աշակերտներ: ՌԻՀԶ-ը հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են «նորմալ» և «ոչ նորմալ», կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

1.3 Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը

Թե՛ հատուկ և թե՛ հանրակրթական դպրոցի մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպես, ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատեսքում գրվող անձանոթ բառերի քանակը, որը աշակերտը պետք է սովորի նախքան նոր դաս անցնելը: Տարբերակված ուսուցումը կիրառվել է աշխարհի տարբեր դպրոցների ներառական

² Դավթյան Մ. և ուրիշ. Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ: Եր., ԱՅՌԵՔՍ, 2002: 310 էջ:

դասարաններում և հիմնված է Վիգոտսկու «Զարգացման մոտակա գոտու» (1978) տեսության վրա, ըստ որի սովորողները լավ են սովորում, երբ տրված հանձնարարությունները մատչելի են, ոչ թե շատ դժվար կամ պարզունակ: Քոֆմանը և Հալահանը (2011) այս մոտեցումը որակում են որպես տեղեկատվությանը «դժվարությամբ տիրապետելու մոտեցում», համաձայն որի, հանձնարարությունները պետք է լինեն դժվար, բայց ոչ խրթին: Տարբերակված ուսուցումը կարող է լինել Ուձ գործընթացի մի մասը: Ուձ-ի ուղղությամբ իրականացված հետազոտությունները վկայում են, որ որոշ սովորողների համար յուրացման չափանիշները կամ ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է սակավ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր: Այսպես, Էդիբերնը (2007, 2010) ներկայացրել է ուսուցման դժվարություններ ունեցող սովորողներին վերաբերող դեպքեր, ում ուսումնառության արդյունավետությունը բարձրացել է, երբ ուսուցիչները հրաժարվել են դասախոսելու և միայն տպագիր նյութերով դասավանդելու ավանդական ձևից: Նման սովորողների հետ աշխատելիս հատուկ պայմանների և փոփոխություններ մտցնելու կարիքը կարող է նվազել, եթե ուսուցիչը դասը պլանավորելիս ցուցաբերի ճկունություն: Այն դեպքում, երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները վաղօրոք նկատի են առնվում և մատչելի դասավանդումը դրվում է դասի պլանավորման հիմքում՝ բոլորը կարողանում են ավելի լավ սովորել:

1.4 Ուսումնառության համընդհանուր ձևավորման շրջանակը

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական: Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը: Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին: Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա արձագանքել հասկացությանը: Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ

դասարանում բանավոր պատասխանելու միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային: Առանց մոտիվացիայի սովորողների կողմից յուրացումը ավելի մակերեսային է: Ուսուցման երեք տեսակներն ամփոփված են ստորև:

1.5 Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները

ՈւՀԶ-ն ունի երեք հիմնական սկզբունք, որը ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը պլանավորելու սովորողների կարիքներին համապատասխան:

ՈւՀԶ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը ողջունում է սովորողների տարբերությունները: Ուսուցիչները կարող են բարելավել իրարից տարբեր սովորողների ուսումնառությունը՝ ճանաչողական, ռազմավարական ուսումնառության բազմազան հնարավորություններ ստեղծելով:³

Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի կողմից դասախոսություն կարդալու, սովորողների կողմից նշումներ կատարելու (դասախոսությունը գրի առնելու) և վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը: Դասախոսության, նշումների, քննության մեթոդը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել: Ավանդական մոտեցումը կարող է նաև խոչընդոտներ առաջացնել այն աշակերտների համար, ովքեր ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում: Դասախոսությունները, նշումները և քննությունը կարող են լինել համընդհանուր ձևավորման մասը, սակայն դրանք դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են:

ՈւՀԶ-ի երեք սկզբունքները հետևյալն են՝

1. Ճանաչողական ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ:

³Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Զեկույց: 11 էջ:

2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռամբ:

3. Հուզական ուսուցման օժանդակում՝ ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառում: Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՌԻՀՁ ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում: Օրինակ, վերևում նկարագրված՝ գրքի ընթերցումը մոտիվացնող մոտեցումը կարող է դիտարկվել ինչպես հուզական, այնպես էլ ռազմավարական ուսումնառության տարբերակ: Ստորև կներկայացնենք ուսուցիչների կողմից նյութի մատուցման, աշակերտների կողմից նյութի վերարտադրման (արտահայտվելու) և դասապրոցեսում աշակերտների ներգրավման բազմազան մոտեցումների կոնկրետ օրինակներ:

Համընդհանուր ձևավորումը և ներառումը

Դասարանում համընդհանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողներին՝ որպես «սովորական» ու «առանձնահատուկ» երեխաների տարբերակումը վերացնելուն, ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին:

Միաժամանակ, համընդհանուր ձևավորումը ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես «լավ դասավանդումը»:

Ըստ Էդիբերնի (2010), համընդհանուր ձևավորումը ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և, միաժամանակ, անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխանող դասարան: Մակայն, երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին, ՌԻՀՁ-ը կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար: Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև:

Ուսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին: Միննույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի (Միավորված ազգեր, 2006) առավել լայն փիլիսոփայությանը: Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովելու մատչելիություն բոլորի համար:

Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար, մյուսների հետ հավասար հիմունքներով, ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են և տրամադրվում են հանրությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում, բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության բազմազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին՝ սովորածը վերարտադրելիս և դասապրոցեսում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել պայմանների բարելավում լսողության խանգարում ունեցող սովորողի համար, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով՝ ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար:

ՈՒՀԶ-ը ուսուցիչների կողմից կիրառվում է դասը պլանավորելիս, գործընթացի հիմքում դնելով համընդհանուր ձևավորման բոլոր երեք սկզբունքները՝ նյութի մատուցման, արտահայտվելու ու ներգրավելու ճկուն միջոցները: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ աղյուսակ 1-ում ներկայացված մոտեցումները ամենօրյա օգտագործման համար պարտադիր չեն: Կարելի է համատեղել որոշ մոտեցումներ՝ հիշելով նյութը մատուցելու ճկուն միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին:

Կան դասարանում ՈՒՀԶ-ի իրականացման բազմաթիվ ձևեր: Ուսուցչի կողմից այս կամ այն մոտեցման ընտրությունը կախված է դասարանում սովորողների առանձնահատկություններից և ուսուցանվող նյութի բովանդակությունից:⁴

ԱՌՊ-ները և համընդհանուր ձևավորումը

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ունեն անհատական ուսուցմական պլաններ: Անհատական ուսուցման պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց: Այս եզրույթներից յուրաքանչյուրը նկարագրված է ստորև՝ Համընդհանուր ձևավորման համատեքստում:

Հասանելիություն

Պատմականորեն, հաշմանդամություն ունեցող սովորողները հաճախել են հատուկ դպրոցներ, որպեսզի ստանան նաև թերապևտիկ ծառայություններ: Հաշմանդամություն ունեցող սովորողները կրթություն են ստացել առանձնացված հաստատություններում՝ հանրակրթական դպրոցներից ու հասարակությունից անջատ: Պարտավորվելով իրականացնել ներառական կրթություն, Հայաստանը փոխեց մոտեցումը և ծառայությունների վրա հիմնված մոդելից անցում կատարեց իրավունքահենք մոդելի: Սա նշանակում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին շարունակվում են մատուցվել ծառայություններ, բայց ավելի մեծ դեր է հատկացվում երեխաների՝ իրենց համայնքում տեղակայված դպրոցներում հավասար հիմունքներով կրթություն ստանալու իրավունքին: Այս իրավունքն ամրագրված է ԱՌՊ-ի առաջին հիմնական նպատակի՝ հասանելիության մեջ: Երբ հաշմանդամություն ունեցող սովորողները հատուկ դպրոցներից տեղափոխվում են հանրակրթական դպրոցներ, ուսուցիչները

⁴ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Եր., 2005: «Նորք» գրատուն:

պատասխանատվություն են ստանձնում դասավանդվող նյութի հասանելիությունն ապահովելու համար: Աշակերտի համար հասանելիությունն ապահովելիս կարևոր է տարբերակել մատուցման մատչելիությունը նպատակային հմտությունների հասանելի լինելուց: Օրինակ՝ ուսուցիչը ներկայացնում է նյութ պատմությունից կամ մաթեմատիկայից: Պատմության դեպքում նպատակային հմտությունն այն է, որ աշակերտը կարողանա յուրացնել պատմության կարևոր տարեթվերը: Մաթեմատիկայի դեպքում նպատակային հմտությունը կարող է լինել երկնիչ թվերի բազմապատկումը: Սակայն, նշված նպատակային հմտությունները կարող են հասանելի չլինել աշակերտի համար: Կարող է թվալ, որ եթե աշակերտը զարգացման առանձնահատկության պատճառով դժվարանում է հասկանալ պատմության դասանյութի բովանդակությունը կամ թվեր գրել, նա երբեք չի հասնի դասի բուն նպատակին: Սակայն, համընդհանուր ձևավորման մոտեցումներ կիրառող ուսուցիչը նպատակային հմտությունը կձևավորի բազմազան ձևերի կիրառման միջոցով: Օրինակ՝ պատմության դասաժամին տեղեկատվությունը կարող է ներկայացվել բանավոր՝ տեսահոլովակի կամ քննարկման միջոցով: Մաթեմատիկայի դասին խնդիր լուծելու համար ուսուցիչը կարող է թույլատրել աշակերտին օգտվել տեխնոլոգիական միջոցից կամ եռաչափ առարկաներից (օրինակ՝ խորանարդիկներից): Երկու դեպքում էլ ուսուցիչը կարող է օգտվել համընդհանուր ձևավորման գաղափարներից, որպեսզի աշակերտներին օգնի տիրապետելու նպատակային հմտություններին: Մասնակցություն Հասանելիության հետ մեկտեղ բոլոր սովորողները իրավունք ունեն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու դասերին: Այդպիսի ակտիվ մասնակցության համար ուսուցիչները դասը պետք է պլանավորեն հատուկ ձևով՝ օգտվելով համընդհանուր ձևավորման սկզբունքներից: Օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտը կարող է ունենալ խոսքի խանգարում, հետևաբար համադասարանցու հետ երկխոսություն պահանջող աշխատանքի տարբերակը կարող է դժվար լինել: Համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան կազմակերպված դասապրոցեսում համադասարանցու հետ հանձնարարության կատարումը կարող է լինել մասնակցություն ապահովելու ձևերից, բայց ուսուցիչը կարող է նաև կիրառել այլ ռազմավարություններ, օրինակ՝ տեղեկատվություն հաղորդելու համար օգտագործել նկարներ, բոլոր սովորողներին

իրար հետ հաղորդակցվելու համար սովորեցնել օգտվել տեխնոլոգիական միջոցներից կամ հարցերին պատասխանելու համար աշակերտներին սովորեցնել ժեստեր: Առաջընթաց Ներառումն ավելի խորը իմաստ ունի, քան հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներկայության խրախուսումը: Մանկավարժները պետք է լինեն գործվալից և մեծ ակնկալիքներ ունենան բոլոր սովորողներից: Դպրոցները պետք է ակնկալեն առաջընթաց բոլոր սովորողներից: Ներառական և հատուկ կրթության մոդելները տարբերվում են սովորողի գնահատման ձևով: Եթե հատուկ կրթության մոդելի դեպքում սովորողն առաջընթաց չի ցուցաբերում, ենթադրվում է, որ դա նրա ունեցած առանձնահատկության հետևանք է: Ներառական միջավայրում նման դեպքում ուսուցիչները և վարչական աշխատողները վերանայում են համակարգը, դպրոցի և դասարանի պայմանները՝ սովորողների ուսումնառության խոչընդոտները վեր հանելու համար: Վերանայումից հետո կազմվում է սովորողի առաջընթացին օժանդակելու գործողությունների պլան: Այդ պլանը կարող է ներառել հավելյալ աջակցություն: Ուսուցիչները նախ և առաջ մտածում են, թե արդյո՞ք ուսուցման խոչընդոտը դասարանի միջավայրն է, իրենք իրենց հարցնելով:

1. Առկա՞ է նպատակային հմտություններ սովորեցնելու համար անհրաժեշտ հասանելիություն և հնարավոր՞ է արդյոք դա փոխել:

2. Արդյո՞ք փորձ կատարվել է նյութը մատուցելու բազմազան ձևերով՝ դրանք լավագույնս համապատասխանեցնելով աշակերտների ուսումնառության ոճին:

3. Կա՞ն ավելի լավ ձևեր, որոնցով կարելի է օգնել սովորողին՝ դրսևորելու իր սովորածը:

4. Արդյո՞ք դասարանում կան սովորողի ուսմանը խոչընդոտող գործոններ (օրինակ՝ ձանձրալի մթնոլորտ, աղոտ լուսավորություն, ճնշումներ դասընկերների կողմից, անհարմար դիրք): Համընդհանուր ձևավորումը, ինչպես անունը հուշում է, ուսուցման նպաստավոր միջավայր ստեղծելն է բոլոր սովորողների համար: Այն կոչված է բարելավելու ներառականությունը՝ ուսուցչի վրա դնելով դասավանդման և ուսումնական գործընթացի կազմակերպման պարտականությունները: Այս մոտեցումն արմատապես տարբերվում է այլ մոտեցումներից, որոնք սովորողների ձախողումները դպրոցում պայմանավորում են նրանց խնդիրներով: Ուսումնառության համընդհանուր

ձևավորում կիրառելիս հաճախ հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները: Այս կերպ ուսուցիչները կարող են հասնել սովորողների մի մասի անհատական ուսուցման պլաններում (ԱՌԻՊ-ներ, որոնք կազմվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար, սահմանված նպատակներին, ինչպես նաև բավարարել առանց ԱՌԻՊ-ի ուսումնառող սովորողների անհատական ուսումնական կարիքները: Բոլոր դեպքերում նյութը ներկայացնելու, յուրացրածը արտահայտելու և ներգրավումն ապահովելու համար կիրառվող մոտեցումների բազմազանությունը ուսուցիչներին հնարավորություն կտա դասերը կազմակերպելու այնպես, որ դրանք համապատասխանեն բոլոր աշակերտների կարիքներին՝ անկախ կրթական կարիքի ճանաչված լինելու փաստից: Համընդհանուր ձևավորումը և ձեր դասարանը Դասարանում համընդհանուր ձևավորման կիրառման համար ուսուցիչներից պահանջվում է երկու կարևոր հանձնառություն: Առաջինը՝ դասերին պատշաճ կերպով նախապատրաստվելու համար ուսուցիչները պետք է ճանաչեն իրենց սովորողների կարիքները: Երկրորդը՝ ուսուցիչները պետք է որոշակի ժամանակ հատկացնեն դասի ներկայացման, աշակերտներին արտահայտվելու հնարավորություն ընձեռելու և դասապրոցեսում ընդգրկելու բազմահնար միջոցները նախապես պլանավորելու համար: Դա ուսուցիչներից կարող է պահանջել լրացուցիչ ժամանակ, ինչպես նաև ղեկավարների օժանդակությունը: Համընդհանուր ձևավորման սկզբունքներով անցկացվող դասաժամերին սովորողները միաժամանակ կարող են աշխատել բազմազան ձևերով, իսկ նյութը ամեն օր կարող է մատուցվել տարբեր եղանակներով: Դպրոցների ղեկավարությունը պետք է վստահի ուսուցիչների մանկավարժական հմտությանը: Դասարանում դասերը կարող են անցկացվել այնպիսի ձևերով, որոնք տարբերվում են մյուսներից: Դպրոցների ղեկավարները պետք է աջակցեն դասերը նման ձևով կազմակերպելուն և խրախուսեն ուսուցիչների կողմից սովորողների կարիքներին հարմարեցված դասերի պլանավորումը: Բերենք ուսուցչի կողմից ՈԻՀՀ-ի օգտագործումամբ դասի պլանավորման մեկ օրինակ (տե՞ս աղյուսակ 2): Եզրափակիչ նշումներ Այս գլխում բերված ՈԻՀՀ-ի համառոտ նկարագրությունը կարող է տպավորություն ստեղծել, որ այդ գործընթացը պարզապես օգտագործում է Տլավ դասավանդման՝ գաղափարները: Սակայն Էդիբերնը (2010) չի կիսում ՈԻՀՀ-ի մասին այս կարծիքը: Ըստ նրա, ՈԻՀՀ-ը ոչ այնքան դասերն ավելի գրավիչ դարձնելու

ձև է, որքան մանկավարժների մտածելակերպի հիմնարար փոփոխում՝ ուղղված դասապրոցեսի ձևավորմանը՝ այն բոլոր սովորողներին հասանելի դարձնելու համար: Նման ձևով դաս կազմակերպելու, սովորողների կարիքները ընկալելու և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու համար ուսուցիչները պետք է օգտվեն գիտական հետազոտություններում ներկայացված տվյալներից: Ուսուցման գործընթացի լավ ձևավորման (ոչ թե զուտ լավ դասավանդման) համար ուսուցիչները պետք է մշտապես գնահատեն իրավիճակները՝ ապահովելու հարգանքը սովորողների կրթության իրավունքների նկատմամբ և մշտապես պլանավորեն նրանց կրթական կարիքների բավարարումը: Միաժամանակ ուսուցիչները պետք է միշտ պատրաստ լինեն փոփոխելու իրենց պլանները, եթե դրանք արդյունավետ չեն: Նյութի ներկայացման, սովորածն արտահայտելու և աշակերտներին դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների վերջնական նպատակն այն է, որ դրանք մատուցվող նյութը հասանելի ու հասկանալի դարձնեն աշակերտների համար՝ նպաստելով ինքնուրույն սովորելուն Տեխնոլոգիաները, հասակակիցների օժանդակությունը, դասավանդման տարբեր ձևերը և սովորողների ուժեղ կողմերի օգտագործումը նպաստում են «Կրթություն բոլորի համար» շարժումը վերջնական նպատակին հասցնելուն, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ ուսուցիչները ստանձնեն ուսուցումը տարբեր սովորողներին համապատասխան ձևով մատուցելու հանձնառություն: Այս աշխատանքը դժվար է և ժամանակատար, սակայն կրթության բարելավված համակարգի և բոլոր սովորողների ուսումնառության պտուղները քաղելու համար արժե գործադրել այդ ջանքերը:⁵

⁵ Խոսքը ներառման մասին է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012: 134 էջ:

Պետական կրթական չափորոշիչները, ուսումնական պլաններն ու մոդուլային ուսումնական ծրագրերը մշակելու ընթացքում առավելագույն ջանքեր են գործադրվում դրանք, որքան հնարավոր է՝ բարձր մակարդակով կազմելու համար:

Ցանկացած նախագծի որակի և մակարդակի վերջնական գնահատականը տրվում է դրա փորձարկման ընթացքում ստացված փաստացի արդյունքներով, այդպես է նաև չափորոշիչների և ուսումնական պլանների ու ծրագրերի պարագայում: Չափորոշիչների, ուսումնական պլանների ու ծրագրերի փորձարկումն իրականացվում է ուսումնառության գործընթացում:⁶ Ուսումնառության գործընթացում այս փաստաթղթերը կիրառելու ժամանակ ոչ թե պետք է ուշադրություն դարձնել այն բանին, թե որքանով են դրանք գեղեցիկ, պերճախոսությամբ լի ու վերամբարձ բառերով շարադրված, ինչքան բարձր գաղափարներ ու ցանկություններ են պարունակում, այլ այն բանին, թե դրանցում ձևակերպված պահանջների աստիճանական իրականացումն իսկապես ապահովելու[±] է անհրաժեշտ մասնագիտական գործառույթներ կատարելու ունակ մասնագետի պատրաստումը: Այս առումով չափորոշիչները, ուսումնական պլաններն ու ծրագրերն առավելագույն չափով օգտապաշտ փաստաթղթեր են դրանք առաջին հերթին ծառայում են մասնագիտական առումով պատշաճ որակ ունեցող, աշխատաշուկայի տվյալ ժամանակի պահանջներին համապատասխանող կադրեր պատրաստելու կարիքներին: Սա չի նշանակում, թե դրանցում պետք է բացակայի անհրաժեշտ զարգացվածություն և աշխարհայացք ունեցող մարդ-քաղաքացու ձևավորման պայմանը: Շատ դեպքերում, երբ խոսվում է կարողություններին միտված ուսումնառության մասին, մարդկանց մոտ այն տպավորությունն է ստեղծվում, որ մարդ-քաղաքացու բաղադրիչն այդ փաստաթղթերից դուրս է դրվում: Դա բացարձակապես սխալ պատկերացում է, որովհետև մասնագետին ներկայացվող պահանջների կարևորությունն առաջին պլան մղելը չի նշանակում, որ մյուս պահանջն անտեսված է: Մեկը մյուսին չի հակասում, պարզապես մասնագիտական գործունեության համար պատրաստ լինելու առումով ավելի հաճախ խոսվում է հենց կարողության մասին: Ինչ մնում է կրթությանը վերաբերող հարցերին, ապա դրանք

⁶ Խրիմյան Ս., Հովսեփյան Ա. և այլք: Դպրոցի ղեկավարում և կառավարում: Եր., ԱՅՌԵՔՍ, 2005: 129 էջ:

բավականին լուրջ մակարդակով ներառված էին նաև մինչ այժմ կիրառվող փաստաթղթերում և շարունակվելու են կիրառվել:

Կազմված փաստաթղթերն ուսումնական գործընթացում գործարկելու ժամանակ հնարավոր է արդյունքների երկու տարբերակ.

1. Ուսումնական գործընթացի ընթացքում կարող է պարզվել, որ առաջին հայացքից շատ լավ և կատարյալ մակարդակով կազմված ուսումնական ծրագրերն իրականում չեն ապահովում այն վերջնական արդյունքը, ինչն ակնկալվում էր:
2. Ուսումնական գործընթացի ոչ պատշաճ մակարդակով իրականացումը կարող է տապալել նույնիսկ իդեալական ուսումնական ծրագրերը:

Առաջին տարբերակի հնարավորությունը պայմանավորված է նրանով, որ կատարյալ թվացող ուսումնական ծրագրերում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել հենց մասնագիտական որակներն ապահովող բաղադրիչներին, դրանք հաճախ ձևակերպված են ընդհանուր պահանջներով, առանց հաշվի առնելու իրական պահանջները: Այդ պատճառով էլ ուսումնական հաստատություններում առանձնահատուկ վերաբերմունք պետք է ցուցաբերել ուսումնական գործընթացի իրականացման նկատմամբ: Գաղտնիք չէ, որ մարդկությունը դարերի ընթացքում ձևավորել է սովորելու և սովորեցնելու ձևերի ու հնարների մշակույթ: Այն ժամանակի ընթացքում հղկվել, կատարելագործվել ու հասել է մեր օրերը և փոխանցվելու է սերունդներին: Ընդհանուր առմամբ, ուսումնական գործընթացի իրականացման վերաբերյալ հարցերն այլ քննարկման թեմա են: Այստեղ հիմնական ուշադրությունը դարձվելու է կարողությունների ձևավորմանն ուղղված ուսումնական գործընթացի իրականացման որոշակի մանրամասների՝ դրանք դիտարկելով գործողության մեջ դրված չափորոշիչների ու մոդուլային ուսումնական ծրագրերի առանձնահատկությունների ենթատեքստում: Ուսումնական հաստատությունում դասավանդողը սովորեցնում է, իսկ ուսանողը՝ սովորում: Կարողությունների ձևավորման խնդրի պարագայում դասավանդողը պետք է ապահովի, օգնի ուսանողին որպեսզի նա ձեռք բերի անհրաժեշտ կարողությունը: Սա է, որ գործընթացի իրականացման որոշակի մոտեցումներին ավելի մեծ տեղ է հատկացնում, չնայած սխալ կլինի մտածել, որ դրանք բացառապես արդյունավետ են միայն կարողություններին միտված ուսուցման ժամանակ: Մենք կտեսնենք, որ դրանք

հավասարապես արդյունավետ են լինելու նաև այլ պարագաներում: Խնդիրն այն է, որ ուսուցման իրականացման և ուսանողի ուսումնառության այդ մոտեցումները չկիրառելը գործնականորեն անհնար կդարձնի ուսանողի կողմից պահանջվող կարողության ձեռքբերումը: Կարողությունների ձևավորմանը միտված ուսուցման ապահովման նպատակով մշտապես պետք է ուշադրության կենտրոնում պահել, որպես նպատակակետ պետք է ընդունել հետևյալ հիմնական հարցերը.

2.1 Գործընթացի իրատեսական պլանավորումը

Ուսուցման գործընթացը պլանավորելու ժամանակ առաջին հերթին պետք է ապահովել այն գործողությունների ուսուցանումը, որոնք ուղղակիորեն բխում են այդ մասնագետի մասնագիտական դերից բխող խնդիրներից: Այս պահանջի տեսանկյունից դիտարկելով անհրաժեշտ է նշել, որ առավել տարածված շեղումը, ինչը նկատվում է գործընթացի պլանավորման դրվածքն ուսումնասիրելիս, այն է, որ մեծամասամբ առաջնային նշանակության հարցերի շարքում մեծ տեղ է հատկացվում այն հարցերին, որոնք տվյալ մակարդակի մասնագետի պարտականություններով չեն պայմանավորված, սակայն ուղղակիորեն կապ ունեն պարտականության հետ:

Դասավանդողին թվում է, որ այդ հարցերը պարտադիր պետք է ուսուցանվեն: Ընդհանուր առմամբ, նա ճիշտ է մտածում, սակայն չի կարելի դա կատարել հիմնական խնդրի հաշվին: Օրինակ, կան մասնագիտություններ, որոնց համար պահանջվում է կարդալ գծագիրը: Հարցը առավել քան պարզ է: Երբ ուսումնասիրում ենք այդ մասնագիտությունների համար կազմված ծրագրերը և դրանց հիման վրա իրականացվող ուսուցման պլանավորման վիճակը, պարզվում է, որ նախատեսված է բավականին խոր ուսուցանել գծագիր կատարելը: Այն, որ գծագիրը կարդալու համար ուսանողը պետք է նաև որոշակի մակարդակ ունենա գծագիր կատարելու հարցերում՝ անառարկելի է: Սակայն հարցն այդ պահանջի սահմանին է վերաբերում: Հնարավոր չէ ապահովել այդ մասնագետի կողմից այնպիսի գծագրի կատարումը, ինչպիսին պահանջվում է գծագրող ճարտարագետից: Նա պարզապես պետք է անհրաժեշտ մակարդակով կարդա աշխատանքային գծագրերը: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ իրատեսական կարող է համարվել ուսումնական գործընթացի վերաբերյալ այն

պլանը, ինչն անմիջականորեն ապահովում է տվյալ մասնագետից պահանջվող գործողությունների գրագետ կատարումը:⁷

2.2 Ուսումնառության գործընթացի անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը

Մասնագիտական ուսուցումը չի կարող սպասված արդյունքն ապահովել, եթե նյութատեխնիկական հագեցվածության առումով բավարար վիճակ գոյություն չունի: Նյութատեխնիկական հագեցման տակ պետք է հասկանալ սարքավորումների, գործիքների, հարմարանքների, նյութերի, անհրաժեշտ տեղեկատու գրականության առկայությունը: Ընդ որում, դրանք պետք է լինեն այնպիսին, ինչպիսիք 94 օգտագործվում են աշխատատեղերում: Այս առումով հաճախ ենք լսում «ուսուցում աշխատատեղում» արտահայտությունը: Հենց աշխատատեղում իրականացվող ուսուցումն է ապահովում առավել բարձր արդյունք: Դա պայմանավորված է երկու հանգամանքով.

- ✓ աշխատատեղն է, որ հագեցված է բոլոր անհրաժեշտ պարագաներով,
- ✓ աշխատատեղում է ստեղծված այն իրավիճակը, որում պետք է ապագայում աշխատի մասնագետը, հաղորդակցվի գործընկերների հետ. աշխատատեղում է, որ ձևավորված է միայն իրեն յուրահատուկ միջավայրը:

Բնական է, որ ամբողջ ուսումնառությունը չի կարելի կազմակերպել աշխատատեղում: Դրա համար էլ ուսումնական հաստատությունը պետք է տեղում ապահովի աշխատատեղին նման միջավայր:

⁷ ԿԱԸԳ՝ հանրակրթության ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014 թ. հունվարի 21-ի N 37-Ա/Ք հրամանով):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բոլոր աշակերտների կրթական կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար պահանջվում է ինտենսիվ համագործակցություն: Այս համագործակցությունը մասամբ տեղի է ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանները մշակելիս: Այդ ընթացքում ուսուցիչները, նեղ մասնագետները, դպրոցների ղեկավարները և ծնողները երեխայի համար արդյունավետ պլան կազմելու նպատակով միավորում են իրենց ջանքերը: Խմբի ներսում բաց երկխոսության և հավասարության սկզբունքները կօգնեն, որ թիմի բոլոր անդամների ձայները լինեն լսելի՝ ծառայելով ի շահ աշակերտների: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ուսուցիչներից այլևս չի ակնկալվում ստանձնելու աշակերտների ուսուցման ամբողջ պատասխանատվությունը: Համատեղ դասավանդման առաջադրվող մոդելը հնարավորություն է տալիս հատուկ մանկավարժներին և ուսուցիչներին օգնականներին աշխատելու ուսուցիչների հետ միասին՝ դասերն արդյունավետ պլանավորելու և անցկացնելու համար: Համատեղ դասավանդման ժամանակ մասնագետները կարող են աշխատել փոքր խմբերով, միասին վարել դասերը, աջակցություն տրամադրել առանձին երեխաների կամ հեշտությամբ անցնել մի դերից մյուսին: Համատեղ դասավանդումը ներառական կրթության համատեքստում հնարավոր է դարձնում աջակցության տրամադրումը բոլոր երեխաներին՝ թիմում ընդգրկված մասնագետների ուժեղ կողմերի առավելագույն օգտագործմամբ:

Այսպիսով ուսումնասիրելով թեման կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումը. ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են՝

1. Ճանաչողական ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ:
2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ:
3. Հուզական ուսուցման օժանդակում՝ ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս. և ուրիշ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Եր., 2004: էջ 14-19:
2. Դավթյան Մ. և ուրիշ. Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ: Եր., ԱՅՌԵՔՍ, 2002: 310 էջ:
3. Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Զեկույց: 11 էջ:
4. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Եր., 2005: «Նորք» գրատուն:
5. Խոսքը ներառման մասին է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012: 134 էջ:
6. Խրիմյան Ս., Հովսեփյան Ա. և այլք: Դպրոցի ղեկավարում և կառավարում: Եր., ԱՅՌԵՔՍ, 2005: 129 էջ:
7. ԿԱՐԳ՝ հանրակրթության ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014 թ. հունվարի 21-ի N 37-Ա/Ք հրամանով):